

**ԳԵՐՇ. Տ. ՎԱՉԷ ԱՐՔ. ՅՈՎՍԷՓԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՋԱՆ ՀԱՅՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ
ԳԵՐՇ. Տ. ՍՄԲԱՏ ԱՐՔ. ԼԱՓԱՃԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՕԾՄԱՆ ԵՒ ԹԱՂՄԱՆ ԿԱՐԳԻՆ**

Երկուշաբթի, Յուլիս 26ի առաւօտեան ժամը 10:30ին Մենթալէլլոյի Սուրբ Խաչ Եկեղեցւոյ մէջ Սուրբ Պատարագի ընթացքին կատարուեցաւ հոգելոյս Տ. Սմբատ Արք. Լափաճեանի «*Վերջին Օծում*»ը, որուն մասնակցեցաւ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, ներկայացնելով Թեմիս Առաջնորդ՝ Գերշն. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանը, իր կողքին ունենալով Հոգշ. Տ. Գեղամ Ծ. Վրդ. Չաքարեանը եւ Հոգշ. Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեանը: Արարողութեան ներկայ էին նաեւ Արժ. Տ. Արշակ Աւագ Քհնյ. Խաչատուրեան, Արժ. Տ. Նարեկ Աւագ Քհնյ. Սատարեան, Արժ. Տ. Շնորհք Աւագ Քհնյ. Տէմիրճեան եւ Արժ. Տ. Չաւէն Աւագ Քհնյ. Տէմիրճեան:

Պետական բացառիկ արտօնութեամբ, հանգուցեալ Սրբազան Հայրը թաղուեցաւ Եկեղեցւոյ Համալիրին մէջ՝ Խաչքարի մօտ: Արարողութեան աւարտին Եկեղեցւոյ Սրահին մէջ մատուցուեցաւ Հոգեճաշ: